ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի 26 դեկտեմբերի 2014թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի ուսումնական պարապմունքների ավարտի հետ կապված գործընթացի քննարկում:

   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/

2. II ընթացիկ քննությունների և ստուգումների – ստուգարքային շրջանի ամփոփում:

   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Նա ներկայացրեց 2014-15ուս. տարվա I կիսամյակում կատարված աշխատանքները կապված ուսումնական գործընթացի հետ: Ըստ ժամանակացույցի իրականացվել են բոլոր աշխատանքները՝ համապատասխան ուսումնական պրոցեսին: Զեկուցողը հատուկ ընդգծեց, որ կիսամյակի ընթացքում դասաժամի բացթողում չի եղել, կրճատվել է ուսանողների կողմից անհարգելի բացակայությունները: Կիսամյակի ընթացքում դեկանատի կողմից նկատողության են արժանացել 6, տնօրենության կողմից խիստ նկատողության 3, իսկ 90ժ. և ավելի անհարգելի բացակայության չի գրանցվել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ք. Վ. Օթարյանը, Գ. Վ. Գուլակյանը, Հ. Ս. Գասպարյանը և ուրիշներ: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին, ընդգծելով, որ ֆակուլտետում իրականացվել է կայուն աշխատանք:

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2014-15 ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների, ստուգումների և ստուգարքային շրջանի առաջադիմությունը, որը կցվում է արձանագրության տեքստին:

Այնուհետև զեկուցողը տվեց ընդհանուր հանձնարարական ամբիոններին և դասավանդող դասախոսներին, որ անհրաժեշտ է պատշաճ նախապատրաստվել քննաշրջանին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Ցուցուլյանը, Մ. Ս. Աթոյանը: Նրանք համակարծիք էին զեկուցողին, ներկայացնելով, որ կապված քննաշրջանի անցկացման հետ իրականացվել են բոլոր պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ-

1. Հանձնարարել ամբիոններին ժամանակին իրականացնել քննաշրջանի կազմակերպման հետ կապված աշխատանքները:
2. Հանձնարարել դեկանատին քննաշրջանի ընթացքում սահմանել հերթապահություն:

ՆԱԽԱԳԱՀ Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ